ՀՐԱՀԱՆԳ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

# ՀՐԱՀԱՆԳ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

## 1. ԻՐԱՎԱԶՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակցի հիմնական գրանցման երկրի վերաբերյալ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում: Միևնույն ժամանակ, Մասնակիցը պետք է գրանցված լինի և գործի Մասնակցի հիմնական գրանցման երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների մասնակցության և համատեղ դիմումի կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի /տես նաև ծանոթագրությունը/:

Համատեղ դիմումի կարգով (ՀԴ) մասնակցության դեպքերում՝

i. Հայտը ներառում է նաև համատեղ դիմում պայմանագիր.
ii. Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.
iii. Հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ դիմում պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները:

ՀԴ-ը պետք է առաջադրի ներկայացուցիչ, որը իրավասու կլինի կոնսորցիումի ցանկացած և բոլոր անդամների անունից հանդես գալու և իրականացնելու որակավորման գործընթացի, որակավորման չափանիշների բավարարման դեպքում՝ մրցութային գործընթացների, իսկ պայմանագրի կնքման դեպքում՝ պայմանագրի կատարման հետ կապված բոլոր գործողությունները: Որևէ Մասնակից գնման գործընթացում չի կարող հանդիսանալ մեկից ավելի համատեղ կոնսորցիումի գործընկեր և չի կարող լինել մյուս որակավորման չափանիշներին բավարարող Մասնակիցների ենթակապալառու:

Պայմանագիրը կարող է կատարվել գործակալության կամ ենթակապալի միջոցով՝ աշխատանքների ընդհանուր ծավալի 25 տոկոսի չափով: Ենթակապալի կամ գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ գնման գործընթացում հաղթող ճանաչված, սակայն գնման գործընթացից հեռացված Մասնակիցը: Բոլոր դեպքերում աշխատանքների զգալի մասով գործակալությունները և/կամ ենթակապալները ենթակա են KfW-ի հաստատմանը:

Պատվիրատուի երկրում պետական կազմակերպությունները իրավազոր են մասնակցելու գնման գործընթացին միայն այն դեպքում, երբ հաստատված է նրանց իրավաբանական և ֆինանսական անկախությունը, առևտրային օրենսդրությանը համաձայն գործելու հնարավորությունը և Պատվիրատուից անկախությունը:

Շահերի բախման դեպքերում Մասնակիցը համարվում է ոչ իրավազոր այն դեպքում, երբ կողմի շահերը կարող են ոչ պատշաճ կերպով ազդել այդ կողմի պաշտոնական պարտականությունների, պայմանագրային պարտավորությունների կատարման, կամ կիրառելի օրենսդրության համապատասխանության վրա, ինչը կարող է նպաստել կամ կազմել արգելված գործողություններ, ինչպիսիք են՝

- «կոռուպցիոն գործողություններ»՝ գնման գործընթացի կամ պայմանագրի կատարման ցանկացած կողմի գործողությունների վրա ազդելու նպատակով որևէ արժեքի ուղղակի կամ անուղղակի առաջարկելը, տալը, ստանալը կամ միջնորդելը.
- «խարդախության գործողություններ»՝ գնման գործընթացի կամ պայմանագրի կատարման վրա ազդելու նպատակով փաստերի խեղաթյուրում կամ բացթողում.

- «անթույլատրելի համաձայնության գործողություններ»՝ գնման գործընթացի կամ պայմանագրի կատարման ցանկացած կողմի գործողությունների վրա ազդելու նպատակով երկու կամ ավելի Մասնակիցների միջև նախատեսված պայմանավորվածության սխեմա՝ պարտապանի իմացությամբ, կամ առանց դրա․
- «հարկադրելու փորձ»՝ գնման գործընթացի իրենց մասնակցության կամ պայմանագրի կատարմանն ազդելու նպատակով ուղղակի կամ անուղղակի անձանց, կամ նրանց գույքին վնասի պատճառում կամ դրա սպառնալիք։

Հետևաբար, Մասնակիցները չպետք է ունենան շահերի բախում։ Մասնակիցները կարող են համարվել որպես շահերի բախում ունեցող մեկ կամ ավելի կողմերի հետ, եթե՝

i. ունեն ընդհանուր վերահսկող բաժնետերեր․
ii. նրանցից որևէ մեկից ստանում են կամ ստացել են ուղղակի կամ անուղղակի սուբսիդավորում․
iii. հայտերի համար առաջադրել են միևնույն իրավաբանական ներկայացուցչին, ուղղակի կամ երրորդ անձանց միջոցով ունեն հարաբերություններ միմյանց հետ, որի արդյունքում հայտնվում են այլ Մասնակիցների հայտերի վերաբերյալ տեղեկատվությանը մուտք ստանալու կամ դրանց վրա ազդելու, կամ գնման գործընթացի վերաբերյալ Պատվիրատուի որոշման վրա ազդելու դիրքում։

Հայտերը նաև կմերժվեն, եթե՝

- Մասնակցի մասնակցությունը բացառվում է համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցների հրահանգների.
- Մասնակիցը ներգրավված է/էր որպես խորհրդատու ծրագրի նախապատրաստման կամ իրականացման ընթացքում։ Նույնը վերաբերում է ձեռնարկություններին և անհատներին, որոնք սերտորեն կապված են Մասնակցի հետ ձեռնարկությունների խմբի կամ նմանատիպ գործնական կապով, ինչպես նաև մի քանի ձեռնարկություններին կամ անհատներին համապատասխանաբար.
- Ներածության բաժնում սահմանված կարգով չի ներկայացվել արդար և թափանցիկ մրցակցության Նախաձեռնման հռչակագիրը (Ձև 12.4, բաժին VI).
- Մասնակիցը նախորդ խարդախային և կոռուպցիոն խախտումների հիման վրա իրավաբանորեն զրկված է Պատվիրատուի երկրում գնումների գործընթացներին մասնակցելու իրավունքից.
- Մասնակիցը կամ պայմանագրի զգալի մասով նախատեսվող ենթակապալառուները տնտեսապես համակապակցված են Պատվիրատուի հետ և/կամ գտնվում են պետական ղեկավարման ներքո և իրավաբանորեն և տնտեսապես անկախ չեն։

Գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեն նաև Մասնակիցները՝

i. որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.
ii. որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.
iii. որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.
iv. որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող Մասնակիցների ցուցակում։

Մասնակիցը ձեռք է բերում մրցույթին մասնակցելու իրավազորություն, եթե ներկայացնում է իրավազորությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր

## 2. ՀԱՅՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայտերի նախապատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը կրում են Մասնակիցները: Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում ծախսերի համար՝ անկախ մրցույթի ընթացքից և արդյունքներից:

Հայտերը, ինչպես նաև հայտերի հետ կապված փաստաթղթերը և նամակագրությունը պետք է կազմվեն հայերեն և/կամ անգլերեն լեզուներով: Հայտերի մաս կազմող օժանդակ փաստաթղթերը և տպագիր նյութերը պետք է լինեն նույն լեզվով:

Գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:

Գնային առաջարկում չի ներառվում ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը:

Գնային առաջարկի տառերով և թվերով արտացոլման մեջ տարբերության առկայության դեպքում հիմք է ընդունվում տառերով գրվածը:

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները հաստատուն են և ճշգրտման ենթակա չեն:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Առաջադրանքի նպատակը.** Մատակարարել և իրականացնել Աճառյան 1, Ավան, Երևան 0040, ՀՀ, հասցեում գտնվող ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի կենսաբազմազանության տեղեկատվական և կրթական կենտրոնի ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգի տեղադրում՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետական և ինժեներական նախագծերի՝ համաձայն ՀՀ-ում գործող շինարարության նորմերի և կանոնակարգերի:

Պահանջվող նյութերի նկարագրությունը, որակը և քանակը տրված են կից ներկայացված ծավալաթերթում: Մանրամասն չափսերը բերված են ճարտարապետական նախագծերում: Մասնակիցները կարող են այցելել տարածք և զննել այն՝ հայտի պատրաստման և աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքագրելու նպատակով (տես՝ բաժին 5):

Կապալառուն պետք է համակարգի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը պայմանագրով նախատեսված ողջ ընթացքում, որը կազմում է 7 շաբաթ: Ցանկացած շեղում առաջադրանքից պետք է նախապես հաստատվի Պատվիրատուի կողմից:

Առաջադրանքում նկարագրված բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն Կապալառուի կողմից: Կապալառուն պետք է տրամադրի բավարար որակավորում ունեցող համակարգողներ, տեխնիկական և այլ անձնակազմ, ով պետք է կարողանա պահանջվող ժամանակի մեջ իրականացնել առաջադրանքում նշված աշխատանքները: Կապալառուն պետք է տրամադրի աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ նյութեր, գործիքներ, սարքավորումներ, ավտոմեքենա:

Առաջադրանքում նշված ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգի տեղադրման աշխատանքները իրականացվելու են տարածքում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներին զուգահեռ, որոնք իրականացնում է WWF–Հայաստանի մեկ այլ կապալառու: Այս աշխատանքների պատշաճ իրականացումը պահանջում է ներգրավված կապալառուների միջև համագործակցություն և աշխատանքների համակարգում՝ վստահ լինելու համար, որ բոլոր աշխատանքները կիրականացվեն ժամանակին և տեխնիկական պահանջներին համապատասխան: Գոյություն ունեցող կառույցին և

տարածքի ներսի մասերին տեղադրման շխատանքների ժամանակ հասցված վնասները պետք է լինեն նվազագույնը:

## 4. ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Մատակարարվող նյութերի համար ընդունվում են ISO և Եվրոպայի ինժեներական ստանդարտները:

Նյութերը պետք է լինեն նոր և առաջին կարգի որակի, նպատակին համապատասխանող, զերծ թերություններից, իսկ դասերը և դասակարգումները՝ ISO և Եվրոպայի ինժեներական ստանդարտների վերջին հրատարակումներին համապատասխան: Այլ ստանդարտներին համապատասխանող նյութերը կարող են օգտագործվել Պատվիրատուի կողմից ընդունելի լինելու դեպքում: Նման ստանդարտները պետք է ապահովեն համարժեք կամ ավելի բարձր որակ: Այս դեպքում ներկայացվում է առաջարկվող և վերը նշված ստանդարտների համարժեքության/տարբերությունների աղյուսակ:

Բարձր դասի նյութերը պետք է օգտագործվեն բոլոր այն դեպքերում, երբ սովորական նյութերը կարող են անբավարար լինել:

## 5. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՔ

Մասնակիցներին խորհուրդ է տրվում այցելել և զննել տարածքը, մերձակա տարածքները և սեփական պատասխանատվությամբ ձեռք բերել հայտի պատրաստման և պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տվյալներ շինարարական աշխատանքներ կատարելու համար: Այցելության ծախսերը կրում են Մասնակիցները: Մասնակիցները, ովքեր ցանկանում են այցելել տարածք, պետք է տեղեկացնեն Պատվիրատուին առնվազն երեք աշխատանքային օր առաջ՝ հնարավորություն տալու տարածք մուտքի պայմանավորվածություններ ապահովելու համար

## 6. ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Ծավալաթերթ
- Ճարտարապետական նախագծեր

# ՀԱՅՏԵՐԻ ՁԵՎԵՐ

(WWF-Հայաստանին ներկայացված ծրարի մեջ պետք է լինի գնային առաջարկ և լրացված ծավալաթերթ)

**1. Գնային առաջարկ**

(Պետք է տպել ձևաթղթի /բլանկի վրա)

Ում. WWF - Հայաստան
11/1, Պռոշյան փ.
0019 Երևան, Հայաստան

Ամսաթիվ. օր/ամիս/տարի
Մրցույթի ծածկագիրը՝
TJSBMZ/2020/03

Համաձայն Ձեր կողմից հայտարարված հրավերի մենք պատրաստ ենք իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի կենսաբազմազանության տեղեկատվական և կրթական կենտրոնի ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգի տեղադրում:

Ուսումնասիրելով հրավերը մեր ընդհանուր գնային առաջարկը կազմում է .

**Գին (առանց ԱՀՀ). ՀՀ դրամ ……………., (Գինը տառերով).**

Մենք, ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ

ա/ Մենք ուսումնասիրել ենք հրավերը, ներառյալ լրացումները և չունենք որևէ վերապահում:

բ/ Մենք հավաքել ենք աշխատանքների պայմանների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություններ և ուսումնասիրել ենք բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ազդել պայմանագրի կատարման վրա:

գ/ Մեր հայտը վավեր է հայտի վերջնաժամկետը սպառվելուց հետո առնվազն 30 օր, համաձայն Մրցութային փաստաթղթերի, և շարունակում է մնալ պարտադիր մեզ համար և կարող է ընդունվել ցանկացած պահի՝ մինչև այդ ժամանակահատվածի ավարտը.

դ/ Մենք, ներառյալ ենթակապալառուները կամ պայմանագրի ցանկացած մասի կապալառուները, չունենք որևէ շահերի բախում ըստ «Հրահանգ մասնակիցներին» բաժնի:

զ/ Մենք չենք մասնակցում որպես մասնակից կամ ենթակապալառու սույն մրցութային գործընթացի ավելի քան մեկ հայտում:

է/ Մեր ընկերությունը, դրա մասնաճյուղերը կամ դուստր ձեռնարկությունները, ներառյալ որևէ ենթակապալառուները կամ պայմանագրի ցանկացած մասի կապալառուները ՀՀ օրենսդրության կամ պաշտոնական կանոնակարգերին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներին համաձայն անիրավազոր չեն ճանաչվել:

ը/ Մենք պետական կազմակերպություն չենք / մենք պետական կազմակերպություն ենք, սակայն համապատասխանում ենք «Հրահանգ մասնակիցներին» բաժնի պահանջներին (ջնջել չհամապատասխանող բաժինը)

թ/ Մենք հասկանում ենք, որ սույն հայտը և պայմանագիր կնքելու առաջարկում (Ընդունման նամակ) ներառված Ձեր գրավոր համաձայնությունը հանդիսանում են մեր միջև պարտադիր համաձայնագիր՝ մինչև պայմանագրի համաձայնեցումը և կնքումը:

ժ/ Մենք ընդունում ենք նաեւ, որ Դուք իրավունք ունեք նվազեցնելու կամ փոփոխելու հրավերի բովանդակությունը և որ Դուք պարտավորված չեք ընդունել ամենացածր գնահատված հայտը:

ի/ Մեր հայտի ընդունման դեպքում մենք չենք կարող որևէ պահանջ ներկայացնել կապված նշված աշխատանքների կատարման համար առաջարկված գնի փոփոխության հետ:.

լ/ Կանխավճարը կազմում է (.......................................) ՀՀ դրամ, ինչը հավասար է պայմանագրի գնի 20 տոկոսին:

Լիազորված և պարտադիր ստորագրություն՝ ____________________

Ստորագրողի անունը և պաշտոնը՝ __________________________________________

Մասնակցի անունը՝ ______________________________________

Հասցե՝ ____________________________________________

Ստորագրման ամսաթիվը՝ _____/____/____

2. Ծավալաթերթ /ըստ կից ներկայացված ձևի/